ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ
ՓԱԿ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № ՇՀԾՁԲ-15/22 – 29

ք. Երևան «11» 07 20/4թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի (այսուհետև՝ Դեպարտամենտ) պետ Ա. Հակոբյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և և Ֆիզիկական անձ Լ. Մկրտչյանը, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը սահմանում են, որ՝

1.1 Վաճառողը մասնակցել է Նախարարության կողմից տրանսպորտային փոխադրման ծառայությունների ձեռքբերման ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՓՇՀԾՁԲ-15/22 ծածկագրով կազմակերպված պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետև՝ Փակ շրջանակային ընթացակարգ) և գրանցվել է որպես հնարավոր մասնակից:

1.2 Վաճառողի կողմից հայտ ներկայացնելը պարտադիր չէ:

1.3 Հայտը Վաճառողի կողմից ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող յոթ աշխատանքային օրվա ընթացքում՝ ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

1.4 Վաճառողը պարտավոր է Նախարարության կողմից, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում, համապատասխան ծանուցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված № 900005000741 հ/հ-ին վճարել հայտի ապահովման չափով գումար:

1.5 Վաճառողը կարող է դադարեցնել Փակ շրջանակային համաձայնագիրը՝ դրա մասին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելով Նախարարությանը: Համաձայնագրի դադարեցումն ավտոմատ կերպով չի դադարեցնում համաձայնագրի հիման վրա նախկինում կնքված պայմանագրերը: Փակ շրջանակային համաձայնագիրը դադարում է, դրա վերաբերյալ դիմումը ՀՀ ՊՆ ՆՏԱԴ դեպարտամենտ մուտքագրվելու մուտքագրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Այդ ընթացքում վաճառողի մասին տվյալները հեռացվում են Փակ շրջանակային համաձայնագրեր կնքած անձանց ցուցակից:

2. Կողմերի պատասխանատվությունը

Սույն համաձայնագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3.2 Սույն համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Վաճառողի վավերապայմանների փոփոխության դեպքում սույն համաձայնագրի փոփոխություն չի կնքվում: Վաճառողը նոր վավերապայմանների մասին գրավոր ծանուցում է Նախարարությանը:

3.3 Սույն համաձայնագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

3.4 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում:

3.5 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն
Հ/հ 900011117026
Էլ. փոստ gnumner@mil.am
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Ֆիզիկական անձ
Այունիքի մարզ, ք. Մեղրի Փարամազի 19/27
անձնագիր՝ ԲԱ 1784500
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/հ 11500840214702

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ